ռում «Դաշնակցութեան Քարտուղարի» երկայնաձիգ ու բեղմնաւոր քարիէրը: Նա ապրել է որոշ ժամանակ Կովկասում, կատարել է մի քանի անգամ ուղեւորութիւններ, թէ քաղաքական պաշտօնով եւ թէ զէնքի ու ժողովարարութեան նպատակով: Եւ, Թիւրքահայ միւս գործիչների համեմատութեամբ, նա ամենամեծ աջողութիւնն է ունեցել Թիֆլիզի, Բագուի եւ այլ քաղաքների հայ շրջաններում: Վռամեանին ամէնքը կը յիշեն, Վռամեանը ամենահաճելի տպաւորութիւնն է թողել իր արագասլաց լեզուով, իր խելացի ու սրամիտ զրոյցներով եւ իր ջերմ, հաղորդական բնաւորութեամբ:

Վերջին անգամը հրաժեշտ տուի մեր անմոռանալի Վռամեանից 1911-ի աշնան, Կ. Պոլսոյ մեր Ընդհանուր Ժողովից յետոյ:

«Շատ եմ գաղաղուել, շուտով պիտի գամ քեզ մօտ Ժընեւ, գէթ մի տարով... միջավայրը փոխելու, հանգստանալու եւ Եւրոպայէն՝ ճաշակելու... Մայրս ու քոյրս էլ այնտեղ են, Մինիկս· տարիներէ ի վեր կարօտով կը սպասեն»...

Եւ ես յոյս ունէի, որ պիտի կարենար իրագործել այդ համեստ ծրագիրը, որին ընկերներն էլ համամիտ էին:

Սակայն, հայոց ճակատագիրը այլ կերպ էր անօրինել Վռամեանի, ինչպէս եւ հարիւրաւոր ուրիշ ընկերների բախտը: Եւ թշուառ մայրը արտասուքն աչքերին ի զուր սպասեց իր Օնիկին եւ յաւէտ փակեց իր աչքերը՝ առանց իմանալու նրա եղերական վախճանի մասին:

Պայթեց բալկանեան պատերազմը: Եւ նրա հետ սկսուեցին բանակցութիւնները հայկական ռէֆորմների շուրջը:

Կուսակցութեան «Քարտուղարը» շարունակեց նստել իր պարտքի սեղանի առջեւ: Պէտք էր մնալ, եւս առաւել, որ Վանի ժողովուրդը պատուել էր նրա երկարամեայ գործունէութիւնը, ընտրելով նրան օսմանեան պարլամենտի երեսփոխան:

«Նոր շրջան» էր սկսւում Հայաստանի համար... Այդպէս էր զգացւում ամբողջ հայութիւնը: Ռուսաստան եւ Գերմանիա ջերմապէս հետաքրքրուած էին հայոց ռէֆորմներով, մրցում էին իրար դէմ, — եւ կաթողիկոս, պատրիարք, Ազգային Ժողով ու քաղաքական կուսակցութիւններ, ամբողջ հայ աշխարհը երազում էր կարճ միջոցում իրագործուած տեսնել եւրոպական կօնտրօլը Հայաստանում եւ նրա հետ հայրենիքի վերածնութիւնը:

Վռամեան մէկն էր պատմական այդ տըխուր շրջանի կարեւոր դերակատարներից եւ նա գործի ու ճիգի կենտրոնումն էր: Նրա գրիչը գուցէ երբեք չէր գործել այնքան թափով ու խանդավառութեամբ:

«Մարզպանները» գալիս էին եւ հարկ էր դնել ռէֆորմների գործը ամրապինդ հիմքերի վրայ:

Նա տուեց «Ազատամարտ»ի մէջ մի գեղեցիկ յօդուածաշարք «մարզպանների» (Հօֆ, Վեստենենկ), ռեֆորմների եւ կաթոլիկ-[illegible]ծակալ Զարժեվսկիի (Վանի ֆրանսիական փոխ-հիւպատոս) դաւաճան արարքների մասին: Յօդուածաշարքը թարգմանաբար ու մասնակի լոյս տեսաւ Պարիզի «Pro Armenia»-ի մէջ:

Վրայ հասաւ համեւրոպական պատերազմը: Նա գտաւ Վռամեանին Վանի մէջ: Ի՜նչ ջերմեռանդ ու բեղմնաւոր գործունէութիւն էր սկսել նա Վասպուրականի մայրաքաղաքում... Դեռ այժմ էլ յուզմունքով եմ կարդում նրա մի նամակը, ուղղած մեզ Պարիզ, ուր խնդրում էր ճարտարապետ Քաջազնունիից՝ ղրկել իրեն յատակագիծ թատրոնական շէնքի կառուցման համար: «Ժողովրդական Տունը» կանգուն էր արդէն, հիմնուած էր եւ Գրադարան-Ընթերցարան, հարկ էր մտածել թատրոնի մասին: Եւ դրա համար ժողովրդական գործիչը յատուկ հանգանակութիւն էր արել Կովկասում:

Ա՜հ, չարաշուք ճակատագիր... Եըլտըզի շուրջը պատրաստւում էր մի այլ ուրագան, որ պիտի կործանէր բոլոր երազները...

Պատրաստւում էր թիւրք-ռուսական պատերազմը:

Եւ ահա նախնական բանակցութիւնները .... Իթթիհատի եւ «Դաշնակցութեան» մարմինների միջեւ, Էրզրում եւ Վան: Ահա Վռամ-